ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԱԳԻՐ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 3 Յունիսի, Մ.Տ.Կ.,- Յունիսի 2ին ժամը 24ին Կրկժան տեղամասից մօտ մէկ ժամ զնդակոծութեան է ենթարկուել հայկական թաղամասը: Գնդակոծուել է նաեւ մօտ տարածութեան վրայ տեղակայուած բանակի զինմասը:

Անյայտ անձանց կողմից ձերբակալուել եւ անյայտ ուղղութեամբ են տարուել չորս քաղաքացիներ՝ Շահբազեան Հրաչիկ Խաչատուրի, որին տարել են իր հերթապահութեան վայրից, Յակոբեան Սամուէլ Միհայէլի, ծնուած 1966թ, Բալասանեան Արկադի, չորրորդ քաղաքացու անունը դեռ անյայտ է:

Յունիսի մէկին շրջգործկոմների նախագահների եւ շրջկոմների քարտուղարների, Ստեփանակերտի քաղխորհրդի առաջին քարտուղարի, Մարզգործկոմի անդամների եւ ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորների հավաքի ժամանակ ընդունուել է մի հեռագիր, ուղղուած Գորբաչովին, Լուկիանովին եւ Մուրալիբովին, որտեղ առաջարկւում է դադարեցնել հակահիրաւական գործողութիւններն ու բռնութիւնները Մարզի հայ բնակչութեան նկատմամբ եւ պատրաստակամութիւն է յայտնւում մի երրորդ հանրապետութեան տարածքում երկխօսութիւն սկսել դարաբաղեան հարցի շուրջ:

Հեռագիրն ուղարկուել է յունիսի 3ի առաւօտեան: Լենինգրադի քաղխորհրդի պատգամաւորներից Ռեյտերը, Եասկին, Ադուշեւը երեկ Գեանջայից մեկնել են Լենինգրադ: Սկոյբեդան, Ռիբակովը, Տորչիրովսկին, որոնք մարդու իրաւունքների յանձնաժողովի անդամներ են, հանդիպում են ունենալու Գեանջայում գտնուող հայ կալանաւորների հետ: Լիխանովան, Գորշկովը եւ Ժուրաւսկին Ղազախով գնալու են Երեւան:

ԱՍԿԵՐԱՆ,- Երեկ Դաշբուլաղ են այցելել երեք զինուորական, մէկ քաղաքացիական հագուստով եւ մէկ կալանաւոր Դաշբուլաղից: Նրանք խնդրել են աւտոբուս, իբր կալանուած դաշբուլաղցիներին Շուշիից տեղափոխելու համար: Դաշբուլաղցիները հաւատալով նրանց աւտոբուս են տուել, սակայն, շուտով կռահելով խաբէութիւնը հասցնում են գիտից դուրս շրջապատել աւտոբուսը եւ ազատել կալանաւորին:

Շահումեան, 4 Յունիսի, Մ.Տ.Կ.,- Երեկ գիշեր, ՕՄՕՆ- ականները հրթիռներով ռմբակոծել են Ադրբեջանի Շահումեան շրջանի Բուզլուխ գիւղը: Վիրաւոր կամ սպանուած չկայ, սակայն գիւղը կրել է նիւթական ծանր վնասներ: Խորհրդային բանակը չի միջամտել: Յայտնենք, որ մի շաբաթից ի վեր արդէն Շահումեանի գիւղերը պարբերաբար ռմբակոծւում են ՕՄՕՆական դիրքերից:

Որոշ աղբիւրներից յայտնի է դարձել, որ շրջանի հայ բնակչութեան տեղահանութիւնը օրակարգի հարց է: Բռնի տեղահանութիւնը կազմակերպողները նոյնիսկ պայմանաւորուել են, թէ քանի ընտանիք պէտք է տեղափոխուի Հայաստան, քանիսը՝ Ստեփանակերտ: